

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

ԳՈՅԱԿԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Գեղարվեստական վավերագրության բնագրերի լեզվական հիմքերի կառուցման նախապայմաններից կարևորը անցյալի մտային հոսքերի շղթայում բառերի ու լեզվական տարբեր միավորների շաղկապման ճշգրիտ օգտագործումն է: Իմաստաբանական առումով գոյականը, աչքի ընկնելով իր ոչ իրադրային նշանակությամբ, հետաքրքիր դրսևորումներ է ունենում հատուկ անունների գործածության առումով: Տեղանունները հիշողությունների որոշակի միջավայր են ենթադրում և կապվում են որևէ վայրի հետ:

Հուշերում զգալի գործածություն ունեն պատմական տեղանունները, վանքերի, դամբարանների, բերդերի անունները: Հաճախ հեղինակը ստուգաբանում է այդ անունները, փորձում ներկայացնել դրանց ծագումը: Այդ երևույթը հուշագրության կառուցվածքային հատկանիշներից է:

Հատուկ անունները ոճական տարբեր դրսևորումներով հանդես են գալիս նաև իմաստախոսություններում, դարձվածքներում, առածներում և այլն:

Հանգուցային բառեր. գեղարվեստական վավերագրություն, գոյական, տեղանուն, լեռնանուն, թևավոր խոսք, լեզվական կաղապար, ձևաբանական գոյավիճակ, գրաբարյան և բարբառային բառաձևեր:

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրությանը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հուշագրությունը, ուղեգրությունը, օրագրությունը և էսսեն: Հուշագրական արձակի քերականական բազմազան երևույթները յուրահատուկ երանգ են հաղորդում բնագրին և հետաքրքրություն են ներկայացնում տեքստի ոճաբանության տեսանկյունից:

Հայտնի է, որ իմաստաբանական առումով գոյականը սովորաբար աչքի է ընկնում իր ոչ իրադրային նշանակությամբ: Խոսքաշարում հանդես գալով նյութական-առարկայական իմաստով՝ այն դառնում է մտքի առարկայացման հիմնական միջոցը, կազմում խոսքի էական միավորը:

Գեղարվեստական-վավերագրական երկերում, սակայն, հետաքրքիր դրսևորումներ կարող են արձանագրվել *հայրուկ անունների* գործածության առումով:

Դրանք հիմնականում տեղանուններ են՝ քաղաքների, լեռների, գետերի, լճերի, եկեղեցիների և վանքերի անուններ, ինչպես նաև անձնանուններ, ազգանուններ (մասնավորաբար նշանավոր մարդկանց) և այլն:

Տրամաբանները կարևոր են համարում անվան նշանակությունը իմաստից

առանձնացնելը: Հայտնի փիլիսոփա Բ. Ռասելը հատուկ անունները համարում էր որոշակի առարկաներին վերաբերող թերի սիմվոլներ, որոնք վկայակոչում են ստանում նախադասության կազմում և հաղորդակցական գործառնության դուրս առարկայական նշանակելի բովանդակությունն չունեն¹:

Գեղարվեստական վավերագրության լեզվում մեծ թիվ են կազմում բնականավայրերի անունները: Դրանք, առավել շատ գործածվելով հուշերում և ուղեգրություններում, հիշողությունների որոշակի միջավայր են ենթադրում և կապվում են որևէ վայրի հետ:

Հուշերում զգալի գործածություն ունեն *պայտնական տեղանունները*² Աբասթուման, Ալեքսանդրապոլ, Քոլագերան, Ղարաքիլիսա և այլն, որոնք, աղբյուրագիտական արժեք ունենալուց զատ, ժամանակաշրջանի հիմնապատկերում որոշակի ոճավորում են ստեղծում: Պատմական տեղանուններ են գործածված Ե. Շահագիզի հուշերում՝ Հանավանք, Բերդաթաղ, Ուլատիտիկ, Այդրգյոլ, Երեք, Դառապավոր, Գոմշախրամ, Տաշտաքար (այս անուններն այսօր գործածական չեն կամ գիտական ոճում ունեն սակավադեպ կիրառություն): Տեղանունների մի մասն ունի իր պատմությունը, օրինակ՝ *Երեքն* առաջացել է *այրեր* բառաձևից՝ ձորամասի ձախակողմյան ժայռերի մեջ եղած այրերից, որտեղ լեզգիների և չերքեզների արշավանքների ժամանակ թաքնվել են տեղաբնակները: Ամենամեծ այրը եղել է *Դառապավորը*, որ դառապա (արաբերեն՝ դուռ) ունի: *Գոմշախրամ* տեղանունը բացատրվում է գոմեշների իջնելու տեղը՝ գետից ջուր խմելու համար: *Դարաչիչակ* պատմական տեղանունը գործածված է Գ. Զանիբեկյանի «Իմ աշխարհից» հուշագրության լեզվում, որ նշանակում է ծաղիկների ձոր (Ծաղկաձոր):

Արցախյան գոյամարտին նվիրված

1 Рассел Б. Искусство мыслить, М., Идея-Пресс, 1999, с. 58.

հուշափաստերում գործածվում են նաև օտար անուններով տեղանուններ՝ Գյուլաբլու, Մուղանլու, Ամիրանլար, Բաղմանլար² և այլն:

Գեղարվեստական վավերագրության հեղինակները հաճախ ընդհատում են «դիպաշարը» և ներկայացնում համառոտ տեղեկանք կամ մեկնաբանություն որևէ իրողության վերաբերյալ: Այսպես՝ հուշագրական արձակի էջերում երբեմն բացատրվում է տեղանվան ծագումը: «Քիչ այն կողմ Խարկով գյուղն է: Խարկով՝ խարկվել բառից է. այստեղ արևը անողոք է ու չար» (Վ.Պ, էջ 136): Այս երևույթը, ունենալով բառարանային գործաբանական արժեք, հատուկ է գեղարվեստական վավերագրության կառուցվածքային ոճին: Հ. Աճառյանը «Կյանքիս հուշերից» գրքում ստուգաբանում է որոշ բնակավայրերի անվանումներ՝ *Ղարիք-դասար*՝ «պանդուխտի բարեկան», *Կուրի-գյոլ*՝ «չոր լիժ», *Կարաչիման*՝ «սև մարգ», *Խուր-բեմդերե*՝ «ուրախ ձոր» և այլն:

Հուշերի լեզվում զգալի գործածություն ունեն լեռնանունները (լեռ, սար, բլուր, ժայռ), որոնք սովորաբար գործածվում են բնանկարներում, այսպես՝ Արագած, Լավվար, Դվալ, Չաթինդաղ (Դժվար լեռ), Քոշաքարա սար, Դիդբլուր, Ճանձաքար (ժայռ) և այլն: *Մեղրասար* հատկանունը գործածված է Վ. Վաղարշյանի հուշերում: Հեղինակը հիմնավոր բացատրում է նաև հատուկ անվան ծագումը. «... Արագավազ գետի ափին ձգվում է ուղղահայաց մի բարձր ժայռ Մեղրասար անունով, որի ճակատին կրաքարով պարսպած մի քարայր կա: ... Քարայրի շուրջը՝ Մեղրասարի ճակատի խոռոչներում՝ հարյուրավոր տարիների ընթացքում ստեղծվել են բնական փեթակներ, ու վխտում են մեղ-

2 Հմմտ. Հակոբյան Թ. Խ. և ուրիշ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 217, 902: Վերջին երկու կազմություններում լար մասնիկը հոգնակիակերտ իմաստ ունի:

րաճանձեր, և սարի ճակատից ծորում են մեղրի շերտեր...» (ՎՎ, էջ 189-190):

Պարզ հատուկ անուններին գուգահեռ հուշերի լեզվում գործածական են բաղադրյալները, այսպես՝ արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվում վանքերի, եկեղեցիների, տաճարների անունները մեծապես գործածվում են հոգևոր առաջնորդներին նվիրված հուշերում. օրինակ՝ Վազգեն Առաքինին նվիրված հուշագրության մեջ գործածվել են *սուրբ* բաղադրիչով բաղադրյալ անուններ՝ Սուրբ Հովհաննես եկեղեցի, Սուրբ Սարգիս եկեղեցի, Սբ. Էջմիածնի Մայր վանք, Սբ. Գայանե վանք, Սբ. Խաչ եկեղեցի, Ս. Համբարձման եկեղեցի, Ս. Փրկիչ եկեղեցի, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, Երուսաղեմի Ս. Հարություն տաճար և այլն:

Բաղադրյալ հատուկ անուններն ակտիվ են Հ. Թումանյանին նվիրված հուշերի լեզվում, առավել գործածական են՝ ա. հին վանքերի, դամբարանների, բերդերի, ձորերի բաղադրյալ անունները, որոնցով լի էր Լոռվա աշխարհը, այսպես՝ Ս. Գրիգորի վանք¹, Աշոտ Ողորմած թագավորի դամբարան, Կայան բերդ, Անուշի ձոր և այլն:

բ. *տեղանուն* + *կայարան* կաղապարով անունները՝ Մանահին կայարան, Շահալի կայարան, Սաղախլու կայարան և այլն:

Իմաստային ու քերականական ընդհանուր հատկանիշներով հանդերձ հատուկ անունները միաժամանակ ձեռք են բերում մի շարք այլ առանձնահատկություններ: Երբեմն շինության արտաքին հատկանիշը վերածվում է հատուկ անվան, օրինակ՝ Սպիտակ տուն, Կարմիր շուկա, Սև շենք և այլն: «Սև շենքը ես մեծատառով եմ գրում, որովհետև հատուկ

անվան պես էր ընկալվում թե՛ առաջնորդում և թե՛ այժմ» (ՄԴ, էջ 64):

Ընդհանուր քանակով գեղարվեստական վավերագրության լեզվատիրության տեղանուններին չեն զիջում անձնանուններն ու ազգանունները:

Հ. Աճառյանի «Կյանքիս հուշերից» հուշագրության բառապաշարի հատուկ անունների մի մասը կրոնական անձնանուններ են՝ Հովհաննես, Իգնատիոս, Աբրահամ, մի ստվար մասը՝ իշխանների և թագավորների անուններ՝ Տրդատ, Տիգրան, Միհրան, Վաղարշակ, Բագրատ և այլն: Ներկայացնելով ազգային մի շարք անձնանուններ՝ հեղինակն անդրադառնում է նաև իր անվան ծագմանը՝ Հրաչյա՝ այն համարելով «ազգային և հայկական նոր անուն» (ՀԱ, էջ 20):

Հուշագրության լեզվատիրություն գործածվում են յուրահատուկ ազգանուններ, որոնք վկայում են, որ Արևմտյան Հայաստանի Մեքսատիայի գավառում տարածված ազգանուններից շատերը կրոնասիրության արդյունք են, այսպես՝ *Օրինածյան, Պապրիարքյան, Տաղավարյան, Լուսարարյան, Գմբեթյան, Գուշակյան* և այլն:

Ինչպես նկատելի է, հատուկ անունները, կարևոր բնութագրեր լինելով հանդերձ, գաժում են մարդկային միտքը մի ամուր ու որոշակի կետի, միտքը դարձնում կայուն, ինչն էլ տրամաբանական մտածողության գործառնություններից է:

Գեղարվեստական վավերագրության լեզվում անձնանուններն ու տեղանունները գործածվում են նաև իմաստախոսություններում, դարձվածքներում, թևավոր խոսքերում: Այսպես՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուից քաղել ենք հետևյալ իմաստախոսությունը. «Խոսել Շեքսպիրի մասին, կնշանակի մեղրամոմե ձեռքերով արևը բռնել» (ԹԺՀ, էջ 20):

Կոլումբոս հատուկ անվամբ դարձվածք. *Կոլումբոսի աչքը հանել* (ասվում է նոր իրավիճակներում)–<<Փորձս հա-

1 Եկեղեցիների և վանքերի անունների շարքում գործածական են վանք վերջնաբաղադրիչով գոյականներ՝ Սաղմոսավանք, Ագռավավանք, Վարագավանք (գործածական է նաև Վարագա վանք տարբերակը) և այլն:

ջողվեց, Կոլումբոսի աչքն են հանել նոր գյուտովս, օրական մեկ շահու հացով բավականանում էի» (ԴԴ, էջ 71):

Բաբելոն տեղանունից է առաջացել *բաբելոնյան խառնակություն* թևավոր արտահայտությունը, որ նշանակում է «ծայրահեղ խառնաշփոթ վիճակ». «Չնալելով այն բաբելոնյան խառնակությանը՝ ես էլ ուրախ էի, որ մասամբ ազատվեցա անձրևից» (Բ, էջ 44):

Գեղարվեստական վավերագրության հեղինակները հմտորեն են օգտվել գոյականի թվի քերականական կարգի ընձեռած լեզվառձական հնարավորությունից: Հայտնի է, որ հատուկ անունները սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում, սակայն ուղեգրության և հուշագրության լեզվում ոճական հատուկ նպատակադրմամբ երբեմն տրվում են հատկանունների հոգնակի կազմության օրինակներ:

V դարի երևելիների անունների հոգնակի գործածությունը Բաֆֆին ընդհանրական իմաստով է կիրառում. «*Եղիշեններն, Խորենացիներն, Մեսրոպներն* չեն կարող սրբել նրանց նախատինքը» (Բ, էջ 31):

Հ. Շիրազը նրբանուրբ ձևով է կիրառում *Նարեկացի* անվան հոգնակին. «Այսօր ազգային համբուրելի հպարտությամբ է լցվում իմ սիրտը, երբ... հայոց *Նարեկացիները* բարձրանում են իրենց իսկական գահին՝ համաշխարհային ճանաչման» (ՀՇ, էջ 33):

Մոնթե Մելքոնյանին նվիրված հուշերում կան *Մոնթե* անվան հոգնակի կազմության ձևեր, որոնք տարբեր նրբիմաստներ են ձեռք բերում: Հավաքական իմաստով նշանակում է ուժեղ՝ հերոս կռվողներ, հանուն արդարության մարտնչողներ (արական անձնանվան իմաստի հիմունքով), օրինակներ՝ «Ինքը մեզնից շնորհակալ կլինեք, եթե մեր շարքերում *Մոնթեններ* դաստիարակենք» (ԱԾ, էջ 52): «Մաղթում եմ, որ իրականա՜նա Մոնթեի երազանքը. Արևմտյան Հայաստանն ազատագրվի, որ մեր ապագա

Մոնթենները ստիպված չլինեն գիտությունը թողած՝ զենք վերցնել, պատերազմել» (ԱԾ, էջ 52):

Հուշագրության լեզվում հավաքական իմաստով գործածվում են ազգանունների հոգնակի թվի կազմություններ. «Մենք ապրում էինք շատ մոտիկ. ես՝ Դավիթաշվիլի հմ. 8, իսկ *Թումանյանները*՝ նույն շարքի հմ. 18 տանը» (ԱԻԺՀ, էջ 16): «Ամսվա ընթացքում մի երկու անգամ *Խանջյանները* լինում էին մեր տանը» (ԳՄ, էջ 540): «Մեր ամբողջ թաղում Բայազետից գաղթած վերաբնակիչներ են ապրում՝ *Աֆրիկյանները, Մոճոռյանները*» (ԱԻԺՀ, էջ 16):

Հետաքրքրական իրողություններ են վեր հանում գեղարվեստական վավերագրության ձևաբանական գոյավիճակները: Բաֆֆու ուղեգրություններում հասարակ անունների հոգնակի կազմության յուրահատուկ պատկեր է նկատվում. տիկին բառի հոգնակին՝ **տիկիներ** «Կանանցում բոլոր տիկիների օթյակներն որոշված է լինում» (Բ, էջ 52), կնիկ (կին) բառի հոգնակին՝ **կնիկներ** «Դա արևելքի այն կնիկներից էր, որի հայացքի մեջ կրակ ու ջերմություն կա» (Բ, էջ 32), մարդ բառինը՝ **մարդեր** «Ես որպես բժիշկ քննում եմ մարդերի մարմինը, սիրտը և հոգին» (Բ, էջ 39), տղամարդ՝ **տղամարդեր** «Ես հասկացա, որ այս երկրի կանայքն սովորություն չունեն օտար տղամարդերի հետ խոսելու» (Բ, էջ 63):

Վերջին երկու հոգնակիակազմությունները՝ *մարդեր, տղամարդեր*, լեզվաբան Հ. Պետրոսյանը արևելահայ գրականի համար շեղում է համարում՝ նշելով, որ անցյալում որոշ հեղինակներ *մարդիկ* և *տղամարդիկ* ձևերին զուգահեռ գործածել են նաև *մարդեր, տղամարդեր* հոգնակիները, որոնք տարածում չեն գտել¹:

Բաֆֆու ուղեգրության լեզվում կրկնակի հոգնակիությամբ է կազմված *ան*–

1 Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 290:

ծինքներ բառաձևը. «Արքունական հողեր կան, որոնք զանազան անձինքների վարձով են տված» (Բ, էջ 210):

Բաֆֆու գեղարվեստավարագրական խոսքի հյուսվածքներում որոշ բառերի հոգնակիակազմության և հոլովման ժամանակ հնչյունափոխություն չի կատարվում, որը ժամանակաշրջանի լեզվին բնորոշ իրողություն էր, օրինակներ՝ **խուրձ-խուրձեր** «Խեղձ երկրագործը հունցքի արտերից հավաքում է կալի մեջ ցորենի խուրձերը» (Բ, էջ 50), **բույն-բույներում** «Թաքնվում են իրենց բույներում» (Բ, էջ 87-88), **ծուխ-ծուխի** «Ամեն մի անսովոր մարդ իսկույն խեղդվելու էր այդ ծուխի օվկիանոսի մեջ» (Բ, էջ 122), **այգի-այգիից** «Թռչունները խմբովին թռչում են մի այգիից դեպի մյուսը» (Բ, էջ 88), **յուն-յունից** «Աթոռը ժառանգական է... ընտրվում է միշտ միևնույն տունից» (Բ, էջ 117), **բուրդ-բուրդից** «Ջուլյոյի հագուստը, ... նորառնամանները բաղկացած են շալից, մագից և բուրդից» (Բ, էջ 117), **ոսկի-ոսկիով** «Դուն ոսկիով ու արծաթով զարդարվեցար» (Բ, էջ 91) և այլն:

Հուշագրության լեզվում նկատելի են գրաբարյան և բարբառային բառաձևերի գործածության դրսևորումներ: Հետաքրքրական պատկեր են ներկայացնում մի շարք բառերի հոլովական հարացույցի միավորները. այսպես՝ **Աստված-Աստուծո**. այս ձևը գրական արևմտահայերենում գործող կանոնական հոլովաձևերից է, որ ավանդվել է գրաբարից. «Այժմ, փառք աստուծո, մեր որդիքն կարդալ-գրել իմանում են» (Բ, էջ 47), **գազաթ-գազաթան** (գրաբարյան կազմություն է) «Անցնելով կամուրջը, կարմիր սարի գազաթան վերա երևում է մի փոքր մատուռ» (Բ, էջ 59), **ձի-ձիան, պաս-պասվա** (բարբառային կազմություններ են) «-Այդ Մեսրոպի ձիան ձայն է,- ասացի ես» (Բ, էջ 101), «Ընթրիքի համար պատրաստում էին պասվա կերակուրներ» (Բ, էջ 62):

Գրաբարի նմանությամբ հատուկ

անունների մի մասի սեռականը կազմվում է *ա* հոլովիչով, որը կարող է ուղեգրական բնագրում ոճավորման արժեք ձեռք բերել. ինչպես՝ **Աստվածածին-Աստվածածնա** «Մի՞թե քո աղան հայ չէ, և կարելի՞ է լուծել սուրբ Աստվածածնա պար» (Բ, էջ 62), **Սալմաստ-Սալմաստա** «Դա մի իշխան էր Խոյի գավառապետի ազգականներից, որին հանձնված էր Սալմաստա կառավարությունը» (Բ, էջ 75): Հարկ է նշել, որ *ա* պարզ հոլովումը լեզվի ամենահին շրջանից հայոց մտածողության մեջ կենդանի է եղել:

Հատկանշական է, որ 19-րդ դարի արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվի որոշ տեղանուններ ենթարկվում են **ու** արտաքին հոլովման՝ *Մողնու, Կարբու, Ապարանու, Թալի-նու, Սանահնու* վանք, սակայն՝ *Հառիճո*: Բաֆֆու ուղեգրություններում նույնպես այդպիսի պատկեր է. «Նոր *Բայազետու* և *Ալեքսանդրապոլու* կողմեր արքունական հողեր կան» (Բ, էջ 210):

Մի շարք հասարակ գոյականներ սեռականում նույնպես կազմվում են *ու* հոլովիչով՝ **մարմին-մարմնու** «-Տերտերի ասածը հոգու շահ ունի, բայց քո ասածը՝ մարմնու,- պատասխանեց նա» (Բ, էջ 66):

Հայտնի է, որ *ծով* բառը հին գրական հայերենում մշտապես թերվում է *ու* հոլովմամբ: Այսպես է նաև արևմտահայերենում **ծով-ծովու** (նաև՝ *ծովի*), որի գործածությանը հանդիպում ենք հուշագրության լեզվում:

Լեոյի «Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին» հուշագրության մեջ գործածվում է **ընկերի** գրաբարյան տարբերակը. «Ես սրտանց նախանձում էի իմ մտերիմ ընկերի երջանկության... ներշնչող հմայքներով» (ԹԺՀ, էջ 75):

Բաֆֆու ուղեգրություններում գործածական են ուղղականաձև հայցականի օրինակներ. «Ասում են ճանապարհին *որդին* կորցրել է, և գիշերները թափառում է այդ անապատում, *որդին* է պտռում» (Բ, էջ 213):

Գեղարվեստական վավերագրության լեզվում որոշ գոյականներ հանդես են գալիս որպես դիմելաձևեր: Խոսքային այդ կաղապարները սովորաբար ունենում են ազգային մշակութաբանական հիմքեր: Դիմելաձևերը գործածություն ունեն նաև հեղինակային պատումներում. «Ներս մտան «սողաները»՝ Բակունցն ու Արմենը» (ԳՄ, էջ 447): Այսպիսի դիմալաձևերը կարելի է կոչել *հե-*

դինակային դիմելաձևեր:

Այսպիսով՝ չնայած իմաստագործական առումով գոյական անունը սովորաբար աչքի է ընկնում իր ոչ իրադրային նշանակությամբ, սակայն հետաքրքրական դրսևորումներ է արձանագրում հատուկ անունների կիրառության առումով: Հուշագրության լեզվում ուշագրավ իրողություններ են գոյականի հոգնակի թվի կազմությունները:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ զԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱԻԺՀ- Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 2006:
2. ԱԾ-Ա. Ծառուկյան, Բարև, ինչպես եք, լավ եք... , Հուշեր, Ե., 2007:
3. ԳՄ- Գ.Մահարի, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Ե., 1989:
4. ԳԶ-Գ. Զանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք երկրորդ, Թատրոնի հետ, Ե., 1980:
5. ԵՇ- Ե. Շահազիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, Ե., 1980:
6. ԹԺՀ- Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969:
7. ՀԱ- Հր.Աճառյան, Կյանքիս հուշերից, Ե., 1967:
8. ՀՇ-Հ. Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից, Ե., 1984:
9. ՄՂ- Մ.Ղուկասյան, Անվերնագիր... 1915, Ե., 2011:
10. ՊՊ- Պ.Պռոշյան, Երկերի ժողովածու, հատոր յոթերորդ, Ե., 1964:
11. ՎՊ-Վ. Պետրոսյան, Ըստիր երկեր, 2 հատորով, հ. 1, Ե., 1983:
12. ՎՎ- Վաղարշյան Վ., Ընկերներս, բարեկամներս և ես, Ե., 1959:
13. Բ-Բաֆֆի, Երկեր ժողովածու, հատոր իններորդ, Ուղեգրություններ, պատմական երկեր, Ե., 1987:

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В ВОСТОЧНО-АРМЯНСКОМ ХУДОЖЕСТВЕННОМ ДОКУМЕНТАЛЬНОМ ЯЗЫКЕ

АШОТ ГАЛСТЯН

Доцент кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна, кандидат филологических наук

В текстах художественного документализма важным предварительным условием построения основ языка является правильный способ сочетания слов и разных языковых единиц в цепи мыслительных течений прошлого. В семантическом контексте существительное, выделяясь своим неситуационным значением, имеет интересные проявления в аспекте использования имен собственных. Топонимы предполагают определенную среду воспоминаний и связаны с определенным местом.

В мемуарах существительное употребление имеют исторические топонимы, названия монастырей, мавзолеев, крепостей. Часто автор дает этимологию этих имен, пытаясь представить их происхождение. Это явление относится к структуральным признакам мемуарной литературы.

Имена собственные в своих различных стилистических проявлениях появляются также в мудрых изречениях, выражениях, поговорках и т.д.

Образование множественного числа существительных является интересной реальностью языка мемуаров.

PECULIARITIES OF THE NOUN USAGE IN THE EASTERN ARMENIAN ARTISTIC DOCUMENTARY LITERATURE

ASHOT GALSTYAN

PhD in Philology, Associate Professor at the Chair of the Armenian Language and its Teaching Methodology, Khachatur Abovian Armenian State Pedagogical University

In the texts of artistic documentary literature one of the important preliminary conditions of the language basis composition is the right way of tying words and linguistic units in the chain of mind flows. In the semantic field the noun, being distinguished for its non-situational meaning, has interesting manifestations in the aspect of its use as a proper name. Place-names suppose a determined base of memories and they are tied with a determined place. Historical place-names, as the names of monasteries, mausoleums and fortresses, have a noticeable use in memoirs. The author cites the etymology of these names, trying to present their origin. This phenomenon is among the structural characters of the memoirs literature. Proper names in their diverse stylistic manifestations also appear in sayings, expressions, proverbs and so on.